



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

19.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/125

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.07.2019թ. թիվ 26/26-1/12057 գրությամբ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի 12.07.2019թ. թիվ V02.4/[14563]-19 գրության հիման վրա, 19.07.2019թ. թիվ 26/26-1/12057 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.07.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման, էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման, աուդիտորական ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԾԶԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին 17.05.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ասատրյանս» ՍՊԸ-ն, ինչի արդյունքում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Ասատրյանս» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելուն տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 37 698 322 ՀՀ դրամ է՝ պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից 67 552 766 ՀՀ դրամ, որը հրավերի պահանջներին չի բավարարում:

Գնահատող հանձնաժողովը, 02.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրել է և առաջարկել «Ասատրյանս» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը 08.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն շտկման նպատակով ներկայացրել է իր էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված ռեզիդենտ շահութահարկի վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ և այլ տեղեկություններ, սակայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 47-րդ կետը հստակ սահմանում է, որ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած

մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, որոշել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ռեզիդենտ շահութահարկի վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ (կցվում է), որի համաձայն՝ 2018թ. «Ասատրյանս» ՍՊԸ-ի ակտիվների հանրագումարը կազմում է 70 698 322 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 67 552 766 ՀՀ դրամ:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 63-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով, ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 37 698 322 ՀՀ դրամ է, որը պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից 67 552 766 ՀՀ դրամ, որը «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց:

Ընկերությունը հայտնել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ռեզիդենտ շահութահարկի վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ, որի համաձայն՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02618043) 2018թ. ընթացքում ակտիվների հանրագումարը կազմում է 70 698 322 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 67 552 766 ՀՀ դրամ:

Վերոգրյալից երևում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացվելուն նախորդող՝ հաշվետու տարվա ընթացքում (2018թ.) ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս չէ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից: Ի վերջո, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ: Իսկ ինչպես արդեն նշվել է, ռեզիդենտ շահութահարկի վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկից ակնհայտ է դառնում, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, այսինքն Ընկերությունը լիովին համապատասխանում է Կարգի 63-րդ կետի «բ» ենթակետի պահանջներին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը գտնում է, որ «Ասատրյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ռեզիդենտ շահութահարկի վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկի պայմաններում, որի համաձայն՝ «Ասատրյան» ՍՊԸ-ի ակտիվների հանրագումարը (70 698 322 ՀՀ դրամ) պակաս չէ պարտավորությունների (67 552 766 ՀՀ դրամ) հանրագումարից, «Ասատրյան» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված պայմաններում գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բոլորքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և «Ասատրյան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ԱՍՍՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/125 ընթացակարգի շրջանակներում 25.07.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.07.2019թ. թիվ ՎՕ2.4/[14563]-19 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը հայտարարել է «ԳՀԾՁԲ-2019/10-

ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 02.07.2019թ. թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.06.2019թ. ստացված տեղեկատվության համաձայն, «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն շտկման նպատակով ներկայացրել է իր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ և այլ տեղեկություններ, սակայն Կարգի 47-րդ կետը հստակ սահմանում է, որ ««Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը 08.07.2019թ. թիվ 6 որոշմամբ մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/125 ընթացակարգի շրջանակներում 25.07.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 17.05.2019թ. հայտ է ներկայացրել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 26.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ **«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի հայրը ներկայացնելու փարվան նախորդող փարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 37 698 322 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 67 552 766 ՀՀ դրամ:**

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.07.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.06.2019թ. տրամադրված եզրակացությունը, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել փաստաթղթում առկա անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.07.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն շտկման նպատակով ներկայացրել է իր էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ և այլ տեղեկություններ, սակայն Կարգի 47-րդ կետը հստակ սահմանում է, որ ««Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում»:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.07.2019թ. թիվ 26/26-1/12057 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 12.07.2019թ. թիվ ՎՕ2.4/[14563]-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2019/125 ընթացակարգի շրջանակներում «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: **«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկարկությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկարկությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:**

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 17.05.2019թ. հայտ է ներկայացրել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 26.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ **«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու փարվան նախորդող փարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 37 698 322 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 67 552 766 ՀՀ դրամ:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.07.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.06.2019թ. տրամադրված եզրակացությունը, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել փաստաթղթում առկա անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.07.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրել է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն շտկման նպատակով ներկայացրել է իր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ և այլ տեղեկություններ, սակայն Կարգի 47-րդ կետը հստակ սահմանում է, որ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2019/125 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.08.2019թ. թիվ 1958 տեղեկանքը, որտեղ նշվել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված 2018թ. շահութահարկի հաշվարկով հայտարարագրված ակտիվների և պարտավարությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար կազմում է՝ 70 698 322 ՀՀ դրամ և 67 552 766 ՀՀ դրամ, ինչպես նաև ներկայացրել է Ընկերության տնօրենի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Ընկերությունը, համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.08.2019թ. թիվ 1958 գրության, փաստացի ունի Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ պահանջվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում առկա չեն «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.07.2019թ. թիվ 26/26-1/12057 գրությամբ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ